

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Մաքսային միությունում կիրառվող սանիտարական միջոցների մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի Համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին

Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության (այսուհետ՝ Մաքսային միություն) անդամ պետությունների Կառավարությունները, այսուհետ՝ Կողմերը,

Մաքսային միությունում կիրառվող սանիտարական միջոցների մասին 2009 թվականի դեկտեմբերի 11-ի Համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 11-րդ հոդվածի համաձայն, համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

Կատարել հետեւյալ փոփոխությունները Համաձայնագրում՝

1. Համաձայնագրի 1-ին հոդվածում՝

երկրորդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«արտադրանքի (ապրանքների) անվտանգությունն ապահովող փաստաթուղթ» նշանակում է լիազորված մարմինների կողմից տրամադրվող փաստաթուղթ (պետական գրանցման հավաստագիր), որը հավաստում է սանիտարահամաճարակաբանական հսկողության (վերահսկողության) ենթակա արտադրանքի (ապրանքների) համապատասխանությունը մարդու առողջության անվտանգության պահանջներին»:

2. Համաձայնագրի 2-րդ հոդվածի երրորդ պարբերությունը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նախադասությամբ՝

«Միասնական սանիտարական պահանջները գործում են մինչեւ տվյալ տեսակի հսկողության ենթակա ապրանքների նկատմամբ ԵվրԱզԷՍ-ի տեխնիկական կանոնակարգերի ընդունումը»:

3. 5-րդ հոդվածում՝

երկրորդ պարբերությունում «ԵվրԱզԷՍ-ի Միասնական սանիտարական պահանջներին» բառերից հետո ավելացնել «կամ տեխնիկական կանոնակարգերին» բառերը, իսկ «Կողմերը» բառից հետո ավելացնել «առանց վերաձեւակերպման» բառերը:

չորրորդ պարբերությունում «ԵվրԱզԷՍ-ի Միասնական սանիտարական պահանջներին» բառերից հետո ավելացնել «կամ տեխնիկական կանոնակարգերին» բառերը,

4. 7-րդ հավելվածի վեցերորդ պարբերությունում «ԵվրԱզԷՍ-ի Միասնական սանիտարական պահանջներին » բառերից հետո ավելացնել «կամ տեխնիկական կանոնակարգերին» բառերը:

Հոդված 2

Կողմերի միջեւ սույն Արձանագրության մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով:

Եթե վեճը չի կարգավորվում խորհրդակցությունների ու բանակցությունների անցկացման վերաբերյալ վեճի Կողմերից մեկի կողմից մյուսին ուղղված պաշտոնական գրավոր խնդրանքի ներկայացման օրվանից հետո վեց ամսվա ընթացքում, ապա վեճի Կողմերից յուրաքանչյուրը կարող է այդ վեճը հանձնել Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

Հոդված 3

Սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու, դրան միանալու եւ դրանից դուրս գալու կարգը սահմանվում է «Մաքսային միության իրավապայմանագրային բազայի ձեւավորմանն ուղղված միջազգային պայմանագրերն ուժի մեջ մտնելու, դրանցից դուրս գալու եւ դրանց միանալու կարգի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի արձանագրությամբ:

Կատարված է Սանկտ Պետերբուրգ քաղաքում, 2010 թվականի մայիսի 21-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահպանվում է Մաքսային միության հանձնաժողովում, որը, որպես սույն Համաձայնագրի ավանդապահ, յուրաքանչյուր Կողմին կտրամադրի իր վավերացված օրինակը:

Բելառուսի
Հանրապետության
Կառավարության
կողմից

Ղազախստանի
Հանրապետության
Կառավարության
կողմից

Ռուսաստանի
Դաշնության
Կառավարության
կողմից